Կալկաթայի հայ համայնքում

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՇՎԵՑ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐԸ

Ապրիլի 2-ին Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում հանդիսավորությամբ նշվեց ճեմարանի հիմնադրման 187-րդ տարեդարձը՝ ազդարարելով ուսումնական նոր տարվա սկիզբը:

Հանդիսությունն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո երգչախմբի կատարմամբ հնչեցին Հնդկաստանի, Հայաստանի հիմները և Մարդասիրական ճեմարանի օրհներգը:

Բարիգալստյան և ողջույնի խոսքով ներկաներին դիմեց Մարդասիրական ճեմարանի վարչական տնօրեն Հարություն սրկ. Համբարձումյանը: Նա անդրադարձավ ճեմարանի անցած ուղուն՝ ընդգծելով, որ հայրենիքից հեռու հիմնադրված այս կրթական հաստատությունը միայն անցյալի փառքով չի ապրում, այլ ճեմարանի այսօրվա կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի առաջնորդությամբ շարունակում է իր պատմական առաքելությունը՝ հայեցի կրթություն ջամբելով մատաղ սերնդին: Հարություն սարկավագը նաև շեշտեց կրթօջախի նկատմամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տածած հայրական սիրո և մշտական հոգածության մասին և ողջունեց ճեմարանի նորընտիր տնօրեն տիար Սումիթրա Մալիկին՝ հաջողություններ մաղթելով նրան:

Այնուհետև տարեկան ամփոփիչ զեկույցով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանը: Նա անդրադարձավ ճեմարանականների ցուցաբերած ուսումնական առաջադիմությանը, ձեռքբերումներին ու ապագա ծրագրերին, ուրախությամբ արձանագրեց, որ ճեմարանի ղեկավարության և ուսուցչական կազմի ջանադիր աշխատանքի շնորհիվ այսօր մեծ ուշադրություն է դարձվում հատկապես կրթության որակին և երեխաների բազմակողմանի զարգացվածությանը՝ վստահեցնելով, որ նախանձախնդրության նույն ոգով և ավյունով շարունակելու դեպքում մոտ ապագայում պիտի ունենանք ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող ուսումնական հաստատություն և ամենակարևորը՝ ուսյալ ճեմարանականներ: Հայր Օշականը մասնավոր անդրադարձ կատարեց ուսուցչական կազմում կատարված որոշ փոփոխություններին, որոնց գլխավոր նպատակը ճեմարանի ուսուցիչների աշխատանքային որակի բարձրացումն է: Հայր Սուրբը նաև ուրախությամբ ողջունեց ճեմարանի նորընտիր տնօրենին՝ անդրադառնալով նրա բարձր պատրաստվածությանը, կրթական ասպարեզում նրա արհեստավարժությանն ու երկար տարիների փորձառությանը: Իր խոսքի վերջում Օշական վարդապետը առանձնակի անդրադարձավ և հատուկ շնորհակալություն հայտնեց Կալկաթայի եկեղեցական խորհրդի անդամնե-

րին, որոնց մշտական հովանավորության և աջակցության շնորհիվ այսօր ճեմարանում բազմաթիվ նորոգություններ ու շինարարական աշխատանքներ են կատարվում՝ ի վայելումն հնդկահայ համայնքի և Մարդասիրական ճեմարանի:

Ներկաներին խոսքով դիմեց նաև ճեմարանի նոր տնօրեն տիար Սումիթրա Մալիկը: Նա խոստացավ իր ամբողջ կարողությունը, մասնագիտական ավյունը և տարիների փորձառությունը ներդնել՝ Մարդասիրական ճեմարանի կրթական կյանքն առավել առաջ մղելու համար:

Տնօրենի խոսքից հետո տեղի ունեցավ նվերների ավանդական բաշխումը, որի ընթացքում պարգևատրվեցին ուսումնառության և կարգապահության ասպարեզում լավագույն արդյունք ցուցաբերած ճեմարանականները: Նվերները հանձնեց Կալկաթայի եկեղեցական խորհրդի ատենապետ տիար Հայկ Սուքիաս Կրտսերը: Այնուհետև ճեմարանի ավարտական՝ 10-րդ դասարանի շրջանավարտների համար նախատեսված հատուկ հուշանվերները նրանց հանձնեց եկեղեցական խորհրդի փոխատենապետ տիար Սունիլ Սոբթին:

Հանդիսության երկրորդ մասում ճեմարանի երաժշտության ուսուցիչ Վաչագան Թադևոսյանի ղեկավարությամբ ելույթ ունեցավ ճեմարանի երգչախումբը՝ կատարելով ինչպես հայ, այնպես էլ օտար կոմպոզիտորների ստեղծագործություններից: Ճեմարանականները նաև իրենց հմտությունները ցուցաբերեցին ասմունքի, երգի և պարի ասպարեզներում՝ ներկայացնելով ժամանակակից և հնդկական ազգային պարային կատարումներ: Ճեմարանականները ներկաների ուշադրությանը հանձնեցին նաև փոքրիկ ներկայացում անգլերեն լեզվով:

Վերջում հանդիսությունն ամփոփեց և օրհնության ու գնահատանքի խոսքով հանդես եկավ ճեմարանի կառավարիչ Հայր Սուրբը:

Հիմնադրման օրը նշանավորվեց նաև երկար սպասված մեկ այլ միջոցառմամբ: Կալկաթայի եկեղեցական խորհրդի փոխատենապետ տիկին Սյուզան Ռուբենը կտրեց ցածր դասարանների տղաների համար նախատեսված հիմնովին վերանորոգված և կահավորված ննջարանային մասնաբաժնի ժապավենը: Բացվեցին նաև նոր վերանորոգված հիվանդանոցային բաժինը և վերակացուի համար նախատեսված առանձնասենյակը:

Վերջում տեղի ունեցավ հյուրասիրություն:

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՀՆԴԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ապրիլի 24-ին՝ 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի ոգեկոչման օրը, ողջ հնդկահայոց համայնքը և Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանի սաները ուսուցիչների հետ միասին այցելեցին Կալկաթայի հայկական Սուրբ Նազարեթ եկեղեցի, որի հարևանությամբ ի հիշատակ Մեծ եղեռնի նահատակների կանգնեցված է Աղոթքի և ուխտի հուշաքար: Հուշաքարի մոտ ծաղկեպսակներ զետեղելուց հետո մեկ բոպե